

ՍՐԲԱՆՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մյուռնոսթինքի ականապեսը դարձանք սեպտեմբերի 22-ին. որն առանձնակի մեծ հանդիսավորությամբ քննարկվող ընդհանուր շահերը հայաստանում պետական կրոն հոգակման 1700-ամյակի հոբելյանական այս փառում:

Հիմալի մեծ է Մյուռնոսթինքի դերն ու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում, որն արդեն նվիրական ու ավանդական է դարձել, արարողություն, որ վեր է ածվել ազգային-եկեղեցական փոխախմբության:

Աշխարհի չորս ծագելից Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին են եկել մեր ժողովրդի ուխտավոր զավակները՝ վերանորոգելու իրենց սրբազան ուխտը: Եկել են հոգեկան ուրախության, կրոնական ու հայրենասիրական հույզերով ու ապրումներով, ազգային հայարարության բարձր զգացումներով՝ իրենց հեղինակությունը բոլոր կարողներ:

Սրբալույս Մյուռնոսթինքի օրհնության համար նախապես թափոնի պատրաստությունը սկսվեց երեկոյան ժամը 17.30-ին: Նորին Սրբությունը Մայր Տաճարում հանդիսավորությամբ զգեստավորվեց հայրապետական շուրջով: Ըստ իրենց աստիճանի, նույն կերպ զգեստավորվեցին ևս ինը նախկնորդներ և արքեպիսկոպոսներ: Ժամը 18.00-ին եկեղեցական թափոնը, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, Մայր Տաճարից դուրս եկավ և հյուսիսային կողմով շարժվեց դեպի նորած Ս. Տրդատյա Բաց Խորան:

Թափոնի առջևից գնում էին շաթիրները, մոմակիրները, բռնակիրները, խաչակիրները, որոնց հետևում էին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները, միաբան սարկավագները, քահանաներն ու վարդապետները, ապա ինը նախկնորդներ և արքեպիսկոպոսներ, որոնք իրենց հեղինակությունները, Ս. Գյուր արքեպս. Նազգաշյանը՝ հին Մյուռնոսթինքի անդր, Ս. Աղան արքեպս. Պալիոյանը՝ ծաղկանց կյանքի անդր, Ս. Պարզև արքեպս. Մարտիրոսյանը՝ Ս. Հակոբոս Ավիյայի Աջը, Ս. Տարոն եպս. Ճերենյանը՝ Ս. Ավետարան, Ս. Վաչե արքեպս. Հովսեփյանը՝ Ս. Թադևոս առաքյալի Աջը, Ս. Զավեն արքեպս. Չինչինյանը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, Ս. Ոսկան արքեպս. Գալիաջյանը՝ Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի Աջը, Ս. Ավագ արքեպս. Ասատուրյանը՝ Ս. Թովմաս առաքյալի Աջը, և Ս. Խաժակ արքեպս. Պարսամյանը՝ րալասանով լի անդր: Ամենապատիվ Ս. Թորգոմ Պատրիարք Մանուկյանը կրում էր Կենաց Փայտը, իսկ Ամենապատիվ Ս. Մեսրոպ Պատրիարք Մուրաֆյանը՝ Ս. Գեղարդը:

Այս նվիրական հանդիսության առթիվ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իր հեղինակությունը էր Կիլիկիո կաթողիկոսության Մյուռնոսթինքի, որը կրում էր Ս. Սուրեն արքեպս. Գաթարոյանը:

Վեհափառ Հայրապետի աջ և աջակ կողմերով ընթանում էին Ս. Նավասարդ եպս. Կոնյանը և Սեպուհ եպս. Չուլջյանը՝ իրեն թղանցակիրներ, այնուհետև՝ Մեծի

Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն, Ս. Մասուն վրդ. Զմրուխայանը և Ս. Վազգեն վրդ. Միրզախանյանը՝ իբրև բողակիրներ, Ս. Սիոն վրդ. Ադամյանն ու Ս. Բագրապարը. Գալստրանյանը՝ իբրև բուրվառակիրներ:

Թափորին մաս էին կազմում նաև քույր Եկեղեցիների հոգևոր պետեր և ներկայացուցիչներ:

«Նրաշափառ Աստուած» շարականի երգեցողությամբ եկեղեցական հանդիսավոր թափորը բարձրանում է Ս. Տրդատա Բաց խորան, և սկսվում է Մյուռնսօրինության սրբազան արարողությունը:

«Կանոն օրհնութեան սրբալոյս Միռնի» հրահանգի համաձայն, Ս. Գրքից ընթերցվում են սուրբ յուդի պատրաստության հոգևոր նշանակության և նրա գործածության մասին համապատասխան հարվածներ: Այնուհետև Նորին Սրբությունն ընթերցում է Մյուռնսօրինության համապատասխան աղոթքները, որպեսզի «եղիցի իւղս այս՝ իւղ ցնծութեան, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց եւ մարմնոց, զի ուր ոք օծցի ի սմանէ՝ վերստին ծննդեան իւղովս, երկիւղած լինի յԱստուծոյ եւ աներկիւղ հակառակորդէն»:

«Բացեր, Տէր, այսօր զգանձդ երկնային» շարականի երգեցողության ժամանակ Սրբալոյս Մյուռնի կնքահայր, փիար Հովարդո Հռենկյանը բացում է Մյուռնի կաթսայի կափարիչը: Վեհափառ Հայրապետը մյուռնաւեփ կաթսայի մեջ լցնում է բալասանը և 40 ծաղիկներից պարտաստված խառնուրդը, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը նոր Մյուռնին խառնում է Անթիփասից բերված մյուռնը՝ իբրև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու միության և միասնականության արտահայտություն:

Այս ամենից հետո Վեհափառ Հայրապետը նոր Մյուռնին խառնում է հինը և, նվիրական երեք սրբություններով՝ Կենաց Փայտով, Ս. Գեղարդով և Ս. Գրիգոր Լուսավորչի՝ Աջով երեք անգամ պաշտնազերելուց հետո, կաթսան ծածկում է կափարիչով:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը հավաքված հավանրացյալ ժողովրդին, հյուրերին և համայն հայությանն ուղղեց հայրական իր պարգամը (տե՛ս էջ 16):

Ապա խոսք է ասում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն.

Սիրելի Վեհափառ Եղբայր, սիրելի պրն Նախագահ, Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պարտասխանարտուներ և հավատացյալ ժողովուրդ հայոց,

Պատրմությամբ լեցուն, պարմությամբ օծուն պահ մըն է այս պահը մեր ազգի ու հայրենիքի փառավոր պարմության մեջ: Եվ այսպես բոլորս Աստուծո աջքերուն դիմաց, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին դիմաց, մեր հայրենի սուրբ հողի վրա կանգնած անգամ մը ևս կու գանք վկայելու, թե մեր ժողովուրդը հավատարիմ է այն ուխտին, որ կնքեց 1700 տարիներ առաջ Աստու-

ծո հետ: Այո, նույն այս սուրբ հողի վրա, նույն այս Միաձուսեջ Տաճարին մեջ Աստված երկինքին հոս իջաւ. մեր ժողովուրդի կյանքի մեջ վերամարդկեղացաւ և մեր ազգի զավակները Աստուծո հետ ուխտ կնքեցին, հաւատարմութիւն հաստատարին մնալու Քրիստոսի Ավետարանին, հաւատարմութիւն մնալու հայրենիքին, հաւատարմութիւն մնալու մեր ժողովուրդի երազներուն ու ձգտումներուն: Եւ այսօր, 1700 տարիներ ետ հազար փառք Աստուծո, որ մենք անգամ մը ևս ազատ ու անկախ հայրենիքի սուրբ հողին վրա Ամենայն Հայոց Հայրապետի հետ որպէս Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս մեր ժողովուրդի զավակներու աչքերուն դիմաց կու գանք վերանորոգելու մեր ուխտը քրիստոնեական, մեր ուխտը ազգային՝ քայել, քայել մեր պապերուն սրբազան ճանապարհին՝ հայրենիքը մեր սրբին, Լուսավորչի կանթեղը մեր հոգիին, Արարարը մեր աչքերուն դիմաց՝ այս է մեր պարմութեան ճամփան:

1700 տարիներ մենք Ս. Մյուռնուլ օծվեցանք: Եթե դարձանք Կիլիկիայէն, եթե դարձանք սիյուռք, մնացինք հայ՝ Մյուռնուլ կապված՝ նույն և մեկ Սրբազան Մյուռնուլ: Այսօր մեկ անգամ ևս կարարեցինք Մյուռնուրէնք և որպէս մեր ժողովուրդի ու Եկեղեցւո միութեան վաւերական արտահայտութիւն, Ս. Էջմիածնի Մյուռնին եկաւ խառնելու Մյուռնը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսութեան՝ ցոյց տալու համար, թե Հայաստանայց Եկեղեցին մեկ է, Հայաստանայց Եկեղեցին մեկ է իր Մյուռնուլ, իր առաքելութեամբ, իր ծառայութեամբ ու իր ժողովուրդով: Այսօր եկանք վկայելու, թե հայրենիքը մեկ է՝ իր Արցախով, իր սիյուռքով և իր երազներով ու ձգտումներով:

Ահապահի վկայութիւնը մեր՝ Աստուծո դիմաց, մեր ժողովուրդի զավակներուն հետ միասնաբար: Թող այս օրհնյալ Սուրբ Մյուռնը հեղվի մեր ժողովուրդի ճակարներուն: Այս Ս. Մյուռնուլ մենք զորացած, այս Ս. Մյուռնուլ ավելի հայացած քայենք մեր պապերու սրբազան ճանապարհին՝ ոչ միայն նայելով անցրալին, այլ նայելով նաև, ու մանավանդ, ապագային: Մեր ժողովուրդը անցյալ չէ, մեր ժողովուրդը ներկա է, մեր ժողովուրդը, մանավանդ, ապագա է՝ իր Եկեղեցիով, իր մշակոյթով և իր հայրենիքով: Հնրեւարար կաղոթեմ առ Բարձրայն Աստված, որ այս Ս. Մյուռնը ավելի ամրապնդէ, զորացնէ մեր Եկեղեցւո, մեր ազգի, մեր հայրենիքի միասնականութիւնը՝ միասնաբար վերանորոգ հաւատքով ու տեսիլքով քայելու մեր պարմութեան լուսաւոյժառ ապագան, այժմ և միշտ և հավիտյանս հաւիտենից, ամեն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ»-ով ավարտում է Սրբալոյս Մյուռնի օրհնութեան սրբազան հանդիսութիւնը: